

նուն սիրելի անձնավորություն մը՝ ընտրելու է Երեսփոխան Ազգային ժողովին մէջ:

1913-ին Կ'անցնի Լուսինի Համալսարանը, ուր կը յաճախէ Պատմութեան, Ընկերաբանութեան եւ Դաստիարակական Հոգեբանութեան մասնաճիւղերու դասընթացներուն: Եւրոպական ընդհ. պատերազմը դժբախտաբար կ'ընդհատէ իր ուսումները. եւ Հ. Սահակ Վ. կը յաջողի ահաւոր մարտէն ազատիլ եւ Ս. Ղազարի յինալ, ուր դրական կեանքի հետ դասատու կը կարգուի վանքի աշակերտութեան՝ որոնց ողի եւ խանդ կը ներարկէ իր ջերմ նկարագրով: Ուսուցիչի եւ դաստիարակի պաշտօնով կը մնայ Մուրատ - Ռափայէլեանի մէջ մինչեւ 1928-ի վերջերը: Այնուհետեւ վերաբացուելով Փարիզի Մուրատեան Վարժարանը՝ կը ստանձնէ Տեսուչի փափուկ ու բարձր պաշտօնը, զոր մեծ ձեռնհասութեամբ եւ ազդանուէր գործունէութեամբ վարած է մինչեւ մեր օրերը, դառնալով Փարիզահայութեան պատկանելի դէմքերէն մին:

Հ. Սահակ Վրդ. ի մասնաճիւղն է պատմութիւնը եւ ունի հմուտ եւ գնահատելի հրատարակութիւններ:

Պատմութիւն Հայոց քննական. տպ. Վենետիկ, 1922, բ. տպ., հատոր երկու, էջ 1178:

Պատմութիւն Հայոց համառոտ. տպ. Վենետիկ, 1928, բ. տպ. էջ 224:

Պատմութիւն Արեւելեան հիմն ազգերու. տպ. Վենետիկ, 1927, էջ 260:

Պատմութիւն Հռոմի. տպ. Վենետիկ, 1917, էջ 510:

Կենսագրութիւն Յովհ. Փաշա Սագրովեանի. տպ. Վենետիկ, 1908:

Մուրատ - Ռափայէլեան վարժարաններու բարերարներն եւ իրենց կտակները. տպ. Վենետիկ, 1937, էջ 96:

Ունի թարգմանութիւններ եւս, ինչպէս

«Փառքի գաւակներ» Ատոլֆոյ Փատովանի, (տպ. Վենետիկ, 1920, էջ 134) եւ «Հապիտներ» ողբերգութիւնը (տպ. Վենետիկ, 1916, էջ 36):

Պատրաստած է նաեւ թատերական գործեր ազգային պատմութենէն «Աւարայրի Դիւցազները» (տպ. Վենետիկ, 1952) եւ տակաւին ձեռագիր՝ «Արշակ Բ.»:

Նմանապէս ունի ձեռագիր «Հայ ժամանակակից Պատմութիւն»ը 1830-էն մինչեւ մեր օրերը, «Պատմութիւն Միփարայ եւ Միփարեան Միաբանութեան», եւ «Պատմութիւն Սամուէլ Մուրատեան ու Մուրատ - Ռափայէլեան վարժարաններու եւ անոնց նշանաւոր աշակերտներու»:

Հ. Սահակ Վրդ. գերազանցօրէն պատմաբան է. իր խօսակցութիւններն ու ձուները միշտ պատմական կորիզ մը ունին, իր տեսաբանութիւնները միշտ հիմնուած են պատմութեան վրայ. իր գլխաւոր նպատակն եղած է պատմութեան ճշգրիտ ու հարազատ ուսումնասիրութեամբ, յաճախ հարուածելով խակ մտքերու թերի գործերը, ցոյց տալ՝ թէ հայ ժողովուրդը ինչ ուղղութիւն պէտք է բռնէ հասնելու համար իր նախկին փառքին:

Հայրենասիրական ջերմ շունչը որով ողբերգութեան շքեղ հանդերձ մը կը զգենու իր պատմութեան դասադիրքը, կը դարձնէ զայն միաժամանակ ընթերցանութեան հրաշալի մատեան մը, որուն համար Նիկոլ Աղբալեան իսկ յայտարարած է՝ ըսելով թէ իր կարգացած դրքերէն ամէնէն գեղեցիկն ու տպաւորիչն է Հ. Սահակի դասադիրքը:

Կը մաղթենք բազմադիրն ու ալեղարդ Յորեմեար Հօր տակաւին երկար տարիներ, որպէսզի լիով պսակուած տեսնէ իր յայտերն ու ջանքերը, վերածնած Հայ ժողովուրդը՝ միաձուլ, միասիրտ ու միահոգի:

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԵՐ ՆԵՐՍԷՍԵԱՆ

ՕՐ. ԼԻԳԵՐՔԱ ՄԻԼՏՈՆԵԱՆ

ԹԱԽՋՈՒԹԱԿԻ ՊՍԱԿԱՒՈՐ

Վենետիկի Պենտեքոնյ Մարչելլոյ Երաժշտանոցի տարեգրութիւններուն մէջ անդամ մը եւս հայ անունը կը դրոշմուի Օր. Լիգեթքա Միլտոնեանի ցոյց տուած մեծ ու գնահատելի յաջողութեամբ:

Տարւոյ Յունիս 18-ին նէ կը ստանար թաւջութակի (violoncelle) փոփէսորի վկայականը:

Piatti, Grützacher, Bach, Boccherini. ահա՛ քննութեան յայտարարին մէջ ցայտող հեղինակները. ու Օր. Լիգեթքա իր կատարեալ ու անթերի նուագածութեամբ կ'արժանանայ ուսուցչական քննիչ Յանձնախումբի բարձր գնահատանքին ու ջերմ շնորհաւորութիւններուն:

Գնահատանքի աւելի բարձր ու յատկանշական բան մը կայ սակայն Օր. Լիգեթքայի ներկայացուցած կտորներուն մէջ. թալի ներկայացուցած կտորներուն մէջ. Արամ Խաչատուրեանի «Թաւջութակի եւ նուագախումբի համերգը», զոր իր իսկ նախաձեռնութեամբ աղնիւ օրիորդը ներմուծած է իր քննութեան յայտարարին մէջ, մուծած է իր քննութեան յայտարարին մէջ, տալով անոր բացառիկ հմայք մը եւ հետաքրքրութիւն. նորութիւն մը եղած է այդ համերգին առաջին նուագածութիւնը Վենետիկի մէջ, եւ մեղի հայերուս համար պատուաբեր արարք մը:

Կրկնակի շնորհաւորութեան արժանի է ուրեմն Օր. Լիգեթքա, նաեւ իր ազգասէր ու հայ արժէքները բարձրացնող այս ձեռնարկին համար:

Նուագներուն ընկերացած է դաշնամուրով անոր քոյրը, Օր. Ակի, որ անցեալ տարի ստացած էր դաշնամուրի բարձր վկայականը, միեւնոյն Երաժշտանոցէն:

Տասը տարի առաջ, երբ տակաւին թաւջութակի հսկայական մեծութեան առջեւ



դրեթէ կը կորսուէր փոքրիկ Լիգեթքան, ո՛չ մէկուն մտքէն կ'անցնէր այսօրուան ուրախութիւնն ու յաղթանակը. ու այդ կը պարտի նախ իր յարատեւ ճիւղերուն եւ անվերջանալի հրահանգումներուն, որոնց շնորհիւ տիրացաւ թաւջութակի լարերու մոգական զաղտնիքին: Կը պարտի նաեւ իր միակ ու տեւական ուսուցիչին՝ Prof. Aldo Pais-ի խղճամիտ եւ ուշադիր առաջնորդութեան:

Ուսուցիչ Pais ալ՝ որ Վենետիկի Ֆելիչե-ի նուագախումբին առաջին թաւջութակահարն է, այսօր արդարօրէն կը պարծի իր հայ աշակերտունիով:

Ջերմազին շնորհաւորութիւններով կը մաղթենք աղնիւ օրիորդին փայլուն ապագայ մը, որ շարունակական վերելք մը ըլլայ յաղթանակէ յաղթանակ եւ շղթայ մը նորանոր յաջողութիւններու:

Անկեղծ խնդակցութիւններ նաեւ իր ընտանեկան բոլոր պարագաներուն:

Թ.Ղ.ԹԱԿ ԻՑ